ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԱՌՈՒՅՑ/ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ
Երիտասարդական աշխատող

ՀԱՍՏԻՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Անհատական և խմբային երիտասարդական աշխատանք, աութրիչի կազմակերպում/իրականացում

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐԱՖԻԿ
28 ժամ/շաբաթ

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
Կենտրոնի համակարգող

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պատրաստել և անցկացնել անհատական և/կամ խմբային աշխատանքներ / գործողություններ երիտասարդների համար,
- Կազմակերպել և/կամ իրականացնել թեմատիկ աշխատանքային հանդիպումներ,
- Իրականացնել անհատական երիտասարական աշխատանք/անհատական խորհրդատվություն,
- Աջակցել Կենտրոնի կամավորներին՝ իրականացնելու աշխատանքային հանդիպումներ,
- Ցուցադրել Կենտրոնի շահառուների տարիքներին համապատասխան ֆիլմեր,
- Իրականացնել աութրիչ երիտասարդական գործողություններ,
- Իրականացնել ցանցային աշխատանք գործընկեր կազմակերպությունների և կրթական հաստատությունների հետ,
- Պահպանել Կենտրոնի առօրյա փաստաթղթերը,
- Կենտրոնի համակարգողին ներկայացնել ամսական հաշվետվություն,
- Տեղեկատվություն տրամադրել հետազոտության և տվյալների բազայի համար,
- Հետևել Կենտրոնի կոնանակարգերին և մաքրության պահպանմանը, ապահովել գույքի բարվոք վիճակը,
- Աջակցել Կենտրոնում իրականացվող գործողությունների անհրաժեշտ փաստաթղթերի պահպանմանը (օրակարգ, դիմումներ, գրանցում),
- Մասնակցել աշխատակազմի հանդիպումներին,
- Աջակցել կենտրոնի առօրյա գործունեությանը առնչվող այլ հարցերում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Կրթության, սոցիալական աշխատանքի, կամ հարակից բնագավառներում բակալավրի աստիճան,
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ կրթական կամ սոցիալական հաստատություններում,
- Գիտելիքներ երիտասարդական և ոչ-ֆորմալ կրթության ոլորտներում (փորձառությունը նախընտրելի է),
- Երեխայի / երիտասարդի հոգեբանության մասին գիտելիքներ և զգայնություն,
- Ուղղորդելու և խորհրդատվություն տալու հմտություններ,
- Թիմում աշխատելու հմտություններ,
- Բարձր միջմշակութային հմտություններ,
- Բանակցելու և կոնֆլիկտների հանգուցալուծման հմտություններ,
- Հաղորդակցման և հռետորական հմտություններ,
- Հայերենի գերազանց իմացություն, անգլերենի և ռուսերենի իմացությունը ցանկալի է,
- Թվային սարքավորումներից օգտվելու և գրաֆիկական ծրագրերի իմացությունը ցանկալի է,

- Համակարգչից և համացանցից օգտվելու գերազանց հմտություններ:

❖ Աշխատողի աշխատանքային գրաֆիկը կազմվում է համաձայն Կենտրոնի աշխատանքային ժամերի:

❖ «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը ստեղծվել է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից 2018 թվականին «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում էր Եվրոպական միությանկողմից:

Կենտրոնը Գյումրիում 13-ից 18 տարեկան երիտասարդներին առաջարկում է կրթական և ժամանցային ծառայություններ, որոնք միտված են բարձրացնելու Գյումրիում երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը: Կենտրոնը բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող առաջին երիտասարդական կենտրոնն է Հայաստանում:

Կենտրոնի մասին ավելին իմանալու համար կարող եք հետևել՝

Կայքէջին՝	http://yic.am/en/youth-house/
Ֆեյսբուքյան էջին՝	https://www.facebook.com/youthhousegyumri/
Ինսթագրամին՝	https://www.instagram.com/youthhousegyumri/